

ԼՅՈՒՍԻ ԹԱՐԳՅՈՒՒՄ

ԵՊԻԿԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԵՐԳԸ

ՅԱՊԻՆԻ ՅԵՎ ԵՎԱՍՏԱՆԸ
ԱՐԱՂԴԱՍՏԱՐՅԱՆԻ



ՊԵՏՂՈՍ

ՀԼԿՅՆԱ ԵՎ ԿԻՑ ՄԱՆԿԱՄԱՏԱՆԵՒԿԱԿԱՆ ՊՈՍՏԱՄԱՌՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
ՅԵՐԵՎԱՆ 1937

891-99
Բ-33



831.995
P-33

ար



Ե Դ Ի Կ Ի ԱՌԱՋԻՆ ՀԱՄԵՐԳԸ

Այդ ցերեկոյթին ներկա եյին քաղաքի մանկապարտեզները: Յեկել եր նաև Եղիկը: Սրահում ազատ տեղ չկար: Բեմի առաջ, պատուհանների մոտ, շարել եյին ավելորդ ակթոռներ, բայց ելի ազատ տեղ չկար:

1010
4 2989

Առաջին շարքում նստել եր Հուրիկը, շորերը մաքրուր-մաքրուր: Նրա կողքին բազմել եր Բուլիկը, սանրած մազերին ժապավեն կապած: Կարմրաթշիկ Աչիկին սպիտակ ժապավենն այնպես եր սագում, վոր կարծես մեկը ծաղիկ լիներ, մյուսը՝ մեծ թիթեռ: Դրանց կողքին նստել եր Կայծիկը: Յերբ նա ժպտում եր, ճերմակ ատամները յերևում եյին: Նա ամեն առավոտ ատամի փոշիով մաքրում եր ատամները և մրցման եր հրավիրել իր տատիկին ու պապիկին:

Իսկ Սեղիկը... Յեղունկները կեղտոտ, գուլպաները ծակ... Չնայած նրա կողքին ազատ տեղ կար, բայց վոչ վոք չեր ուզում նրա մոտ նստել, վոչ վոք չեր սիրում կեղտոտիկին:

Չանգը տալուց հետո բեմ գուրս յեկավ Չութակահարը: Նա շատ եր սիրում յերեխաներին. հաճախ նվագում եր նրանց համար: Այս անգամ

ել նա սովորականի պես ժպտաց, նշան տվեց դաշ-
նակահարուհուն և սկսեց նվագել «Գարուն»-ը:

Եղիկը շփոթված նայեց չորս կողմը: Այդ ինչ
բան եր... Սրահում ազատ տեղ չկար, բայց կար-
ծես փոչ մի մարդ չկար, կարծես փոչ փոք չեր շըն-
չում:

Չուլթակահարը շարժում եր կնտկնտոցը: Կար-
ծես յերգում եյին թռչունները:

Ծիծեռնակը — ճըլ — ճըլ — ճըլ:

Սոխակը — ճյո — ճյո — ճյո:

Ճնճղուկը — ծիվ — ծիվ — ծիվ:

Փայտփորիկը — թըկ — թըկ — թըկ:

Ձիլ ձայներով մրցում եյին արտուտիկը, նախ-
շուն տոտիկը, կաթավիկը — կլթ — կլթիկը, և սար-
յակը, և կաչաղակը և մեծ ու փոքր թռչունները:

Յերեխաները գարմացած նայեցին իրար: Ան-
պայման դարչիճումն եյին յերգում թռչունները,
խսկական, իսկական թռչունները:

Չե — ե. ներսում թռչուններ չկային. Չուլթա-
կահարի մատների տակն եյին ծտերը, Չուլթակի
մեջն եյին սոխակը, սարյակը, կաչաղակը:

Նվագը շարունակվում եր:

Նախշուն թևիկ հոպոպիկը — պո — պո — պո:

Յերկար կտուց կուկույիկը — կո — կո — կո:

Հուլունքավոր հնդունավը — գըլ — գըլ — գըլ:


Կարմրակատար արաղաղը — ծու — զրու — զո:

Սագն ու բաղը — կափ — կափ — կափ:

Հափն ու ծիտը — կըտ — կըտ — կըտ:

Յերեխաները գարձյալ շփոթված նայեցին ի-
րար:

Հափն ու ծիտը, բաղն ու սագը յերը յեկան,
ինչպես մտան դարչիճը... Սակայն շուրջն իրենցից
բացի փոչ փոք չկար:



Այծիկ — մը — կը — կը:

Գառնիկը — մե — մե — մե:

Այս անգամ սրահում ծիծաղ բարձրացավ: Յե-
րեխաները և՛ ըրքջում եյին և՛ նայում նվագողին:

Այդ ի՞նչ գարմանայի ջուժակ եր, փոր կարո-
ղանում եր տեսակ-տեսակ ձայներ հանել: Գուցե
ջուժակահարը բերանով եր մրկրկում...

Վնչ. նա ամուր սեղմել եր ծնոտներն ու նվա-
գում եր համարյա խուփ աչքերով:

Քիչ անց, ջուժակահարը նայեց դաշնակահա-
րունուն և հանկարծ... Հանկարծ փորոտացին ամ-
պերը.

— Գը՛ն — գը՛ն — գը՛ն...

Ուփեց կայծակը.

— Թը՛ր՛իկ — Թը՛ր՛իկ — Թը՛ր՛իկ:

Ապա լավեց միալար, խուլ ձայն:

Անձրեն եր ծեծում զուռն ու պատուհան:

Հոեցին ծտերը, կշկշայեն տուն վագեցին հա-
վերը: Տխուր եր, ցուրտ եր:

Այնպես լավ եր նվագում ջուժակը:

Եղիկը սեղմվեց ընկերոջը, հայացքն ընկավ
պատուհանից դուրս:

Դրսում արև եր, պայծառ յերկինք... Այդ ի՞նչ
եր. նոր չփորոտացի՞ն ամպերը, նոր չխփե՞ց կայ-
ծակը...

Ձե — Է...

Կայծակն ու փորոտը ջուժակի մեջն եյին:

Անձրեն ու ցուրտը ջուժակի մեջն եյին:

Յերեխաները լուռ լսում եյին:

Ել չեյին ժպտում նրանց պայծառ աչքերը:

— Քե՛ռի, բավական ե, բավական ե, փորքան
լոեցին ծտերը, այնպես արա, փոր նորից...

Ու նորից դայալեցին թռչունները.

Ծիծեռնակը — ճը՛լ — ճը՛լ — ճը՛լ:

Սոխակը — ճյո՛ւ — ճյո՛ւ — ճյո՛ւ:

Ճնճողուկը — ծի՛վ — ծի՛վ — ծի՛վ:

Փայտփորիկը — Թը՛կ — Թը՛կ — Թը՛կ:

Նախշուն թևիկ հոպոպիկը — հո՛պ — ո — պո՛:

Յերկար կտուց կուկույիկը — կո՛ւ — կո՛ւ — կո՛ւ:

Հուլունքափոր հնդուհավը — գը՛լ — գը՛լ — գը՛լ:

Կարմրակատար աքաղաղը — ծուղ — բու — դո՛ւ:

Յե՛վ այնպես լավ եր. կանաչ գարուն, ջերմ-
ջերմ արև ու ծագիկ:

Յերբ համերգը վերջացավ, հայրուրավոր թա-
թիկները ծափ տվին:

— Ելի նվագիր, — խնդրեցին:

Ջուժակահարն ելի նվագեց:

Յերեխաները դարձյալ տվին ծափ, ծափ ու ծափ:

Նորից խնդրեցին.

— Ի՛իս — բիս, ուլլա՛մ...

Ու բե՛մ նետեցին ծաղիկներ՝ շուշան, հասմիկ,
վարդ:

Ջուժակահարը քրտնել եր, հոգնել, բայց յերբ
նայեց հարյուրավոր պայծառ աչքերի, նոր թափ
ստացավ:

Այս անգամ նա նվագեց «Գիշերային»-ը:

Յերեխաները խաղաղվեցին, հենվեցին իրար
ու հետզհետե կախվեցին նրանց շեկ ու սև գուլի-
ները, գանգրահեր գլուխները գիշերային ծաղիկ-
ների պես...

Եղիկը տուն յեկավ ու ասաց հայրիկին.
— Յես՛ել ուղում եմ նվագել են վաստակավոր

քեռու պես: Մի մեծ, մեծ շուժակ կանոնս ինձ համար:

Հայրը տղային տարավ յերաժշտի մոտ:

Յերաժիշտը փորձեց նրա լսողութիւնը, նայեց ձկուն, յերկար մատներին ու ասաց.

— Հայրիկը թող եզուց քեզ համար կես շուժակ գնի. կգաս ինձ մոտ, նվագել կսովորես:

— Յես ուզում եմ են քեռու պես նվագել: Են քեռին մեծ, մեծ շուժակ ուներ: Ինչիս ե պետք կես շուժակը, — լաց յեղավ Եղիկը:

— Են քեռին մեծ ե, յերկար ձեռքեր ունի, յերբ քո ձեռներդ ել մեծանան, շուժակդ ել կմեծանա:

— Են մեծ քեռին առաջ փոքր շուժակի վրա յե նվագել:

— Բա ի՞նչ ես կարծում, — բացատրեց յերաժիշտը. — յերկար տարիներ սովորել ե:

Պատասխանն ամենևին գուր չեկավ անհամբեր Եղիկին. նա խռովականի պես գլուխը կախեց: Քանի տարի յե հարկավոր սովորել:

— Հը՛, ի՞նչու թթվեցիր, — ծիծաղեց հայրը:

— Յես հո կաթ չեմ, փոր թթվեմ, — փնթփռնթաց Եղիկն ու նորից մտածեց:

3

Մի առավոտ Եղիկը զարթնեց, տեսավ սեղանի վրա մի յերկար տուփ: Նա զարմացած բացականչեց.

— Վա՛յ, շուժակ...

Հայրիկն ու մայրիկը գնացել եյին աշխատանքի, միայն տատիկն եր տանը:

Եղիկն ուրախ վագեց նրա մոտ, շնչասպառ ասաց.



— Զո՛ւ... Ղո՛ւ...

— Զո՛ւր ես ուզում:

— Թ՛անկ... Թ՛անկ...

— Տաք Ղո՛ւր ես ուզում:

— Զու՛թակ եմ ասում, Ղու՛թակ, — քրքշաց Ե-
զիկը, իսկ դու, — Ղու՛ր, Ղու՛ր, տաք Ղու՛ր:

— Կրակի վրա կաթ ու շիլա յեմ գրել քեզ հա-
մար, մեկ-մեկ աչք տուր: Կաթը վոր յեռա, վեր-
ցրու, շիլան խառնի, յես գնում եմ հացի:

— Կանեմ, կանեմ, — հավատացրեց Եզիկը, կաթը
կխառնեմ:

— Կաթը վերցրու, շիլան խառնի, — յերկրորդ
անգամ բացատրեց տատիկը:

Եզիկը լսում եր, վոր հասկանար. ուշքն ու
միտքը Ղու՛թակը տարել եր:

Ա՛յ, նա հիմի կարող ե սովորել: Բայց արդյոք
նվագելու համար հարկավոր եր սովորել, են ել
տարինե՛ր, տարինե՛ր...

Նա մատները դիպրեց լարերին. հնչեցին լա-
րերը:

Կնակնտոցը քսեց լարերին. հնչեցին լարերը:

Ուրեմն... Ուրեմն ել ինչո՛ւ սովորել, յերբ կա-
րող ե միանգամից նվագել ու համերգ տալ են
քեռու պես: Այո՛, այո՛, են քեռու պես, միայն թե
լինի բեմ ու լսող:

Իեմ սարքելը հեշտ ե. կբարձրանա սեղանի
վրա:

Հանդիսական հավաքելն ե դժվար... Ինչո՛ւ
դժվար, իրենց բակում ենքան յերեխա կա:

- Կկանչի Հուրիկին, Բուլիկին:
- Կկանչի Այծիկին, Կայծիկին:
- Կկանչի Շուշանին, Ալվանին:
- Բոլորին «հաւեցեք», — կասի:

Յե՛վ Եզիկը վոզևորված դուրս յեկավ, ընկեր-
ներին հրավիրելու:

Ազիզյանի տատիկն ասաց.

— Մեր Հուրիկը գնացել ե Բուլիկի մոտ դաս
սովորելու:

Սիրունյանի պապիկն ասաց.

— Մեր Այծիկը գնացել ե Կայծիկի հետ գրոս-
նելու:

Քաղցրիկյանի քույրիկն ասաց.

— Ետը մեր Ալվանի հանգստի ուրն ե. լողա-
նում ե, վոր եզուց մաքուր գնա մանկապարտեզ:
Տանձիկյանի յեղբայրն ասաց.

— Վորովհետև մեր Շուշանը շատ խելոք ե և՛
տանը և՛ դպրոցում, դրա համար մայրիկը նրան
տարել ե կոոպերատիվ՝ նախշուն գուլպա գնելու:

Եզիկը յես յեկավ լացուկամած:

Հակառակի պես ընկերներին վնչ մեկը, վնչ
մեկը չկար, վոր լսեր, թե ինչպես եր նվագում
Եզիկը, Եզիկը՝ հայտնի Ղու՛թակահարը...

Նա մտածեց, մտածեց ու հնարը գտավ:

Թող չլինեն Հուրիկը, Բուլիկը, թող լինեն
շնիկը, փիսիկը:

Թող չլինեն Այծիկը, Կայծիկը, թող լինեն ծա-
ռի վրայի ազուավիկն ու ծիտիկը:

Նրանք ել ականջ ունեն. յեթե ականջ ունեն,
պիտի վոր լսեն:

Փիսիկը, վոր կծկվել եր մկան բնի մոտ ու
սուտ սաակած ձևացել, իր անունը լսելուն պես,
գլուխը բարձրացրեց:

Շնիկը, վոր գզգզվելու համար կծկվել եր փի-
սիկի կողքը ու սուտ քնած ձևացել, իր անունը
լսելուն պես, գլուխը բարձրացրեց:

— Դեհ, շնիկ, փիսիկ, ծառի վրայի ազուավիկ

ու ծիտիկ, սկսում ենք, — ասաց Եզիկը, բարձրացավ սեղանի վրա և կնակնտոցը շարժեց:

Նրա դեմքը փայլեց ուրախությունից: Թե ինչ եր նվագում, նա չգիտեր, իմանալու յեւ կարիք չկար: Կարևորն այն եր, վոր հեշտությամբ շարժում եր մատները, ուշագրությամբ լսում եյին շնիկը, փիսիկը, ազնավիկն ու ծիտիկը:

— Դեհ, հիմի սկսում ենք իսկական համերգը, — վոգեվորվեց Եզիկը ու քաշեց կնակնտոցն այնպես ամուր, վոր լարերը ճռռացին...

Այդ անձոռնի ձայնը դուր չեկավ նրան... Յե՛րբ են հայտնի ջութակահարներն այդպես նվագում: Նվագի փոխարեն խռխոց եր լսվում:

Նա փորձեց նորից ու նորից, բայց նրա մատների տակ չերգեցին թռչունները:

Վո՛չ կլու՛ն — կո՛ւ - կո՛ւ - կո՛ւ - կո՛ւ:

Վո՛չ սոխակը — ճյո՛ւ - ճյո՛ւ - ճյո՛ւ:

Վո՛չ սարյակը — ճր՛ւ - ճր՛ւ - ճր՛ւ:

Վո՛չ ճնճողուկը — ծի՛վ - ծի՛վ - ծի՛վ:

Չայն չհանեց արտուտիկը, նախշուն տոտիկը:

Կաքավիկը, կլթ - մլթիկը:

Կաչաղակը կչկչանը:

Եզիկը զայրույթից սեղմեց բռունցքը:

Հը՛... Տվել են կես ջութակ և ուզում են, վոր յերգեն ծտերը, ինչպես են մեծ քեռու մատների տակ: Չեն յերգի, իհարկե չեն յերգի... Լսողն եւ պիտի կարծի, թե նվագողն ե անշնորհք...

Գլուխը թաթերին դրած մումուում եր փիսիկը:

Գլուխը թաթերին դրած վնգստում եր շնիկը:

Լուռ եյին ծառի վրայի ազնավիկն ու ծիտիկը:

Եզիկը հանդիսականների դժգոհ կերպարանքը տեսնելով, ասաց.

— Եսոր ծտերի հանգստյան որն ե... Դրա հա-

մար ել չեն ուզում յերգել: Սկսում ենք յերկրորդ մասից, կայծակից, — հայտարարեց նա և զայրույթից վորոշեց. այնպես կանեմ, վոր զոռգոռան ամպերը, կայծակը խփի.

Յե՛վ սոխակին:

Յե՛վ սարյակին:

Արտուտիկին, կաքավիկին.

Յե՛վ... յե՛վ... յե՛վ... յե՛վ...

Յե՛վ բորբին...

— Հետո յել պիտի ասեն, վոր յես չեմ կարողանում նվագել, — լաց յեղավ նա, — ինչո՞ւ պիտի ասեն, յերբ յես... Յերբ յես, են քեռու պես...

Տխուր նայում եր փիսիկը:

Տխուր նայում եր շնիկը:

Կծկվել եր ծառի վրայի ազնավիկը:

Եզիկը նայեց նրանց:

— Մի՛թե նրա համար ե հրավիրել հանդիսականներին, վոր ցույց տա, ինչպես ե լալիս ինքը... Ինքը, հայտնի ջութակահարը, — մտածեց Եզիկը:

Վո՛չ, նա լաց չի լինում, արցունքն ինքն իրեն ե գլորվում, անշնորհք լարի վրա յե բարկացել... Այժմ այնպես կանի, վոր անպայման յերգեն ծրտերը, կայծակն ել թող չխփի նրանց. թող խփի լարերին, կնակնտոցին...

Յերբ նվագում եր են հայտնի ջութակահարը, վո՛չ վոքի չեր նայում:

Աչքերը փակեց Եզիկը և նորից վերցրեց ջութակը:

Սկզբում լսեց թույլ խոռոց, ասես յերգիչը մաքրում եր կոկորդը, բեմ յեղնելու համար, սակայն ինչքան մաքրում եր, ավելի յեր խուստում:

ու ծիտիկ, սկսում ենք, — ասաց Եգիկը, բարձրացավ սեղանի վրա և կնտկնտոցը շարժեց:

Նրա դեմքը փայլեց ուրախությունից: Թե ինչ եր նվագում, նա չգիտեր, իմանալու յեւ կարիք չկար: Կարևորն այն եր, վոր հեշտությամբ շարժում եր մատները, ուշադրությամբ լսում եյին շնիկը, փիսիկը, ազնավիկն ու ծիտիկը:

— Դեհ, հիմի սկսում ենք իսկական համերգը, — վոգեվորվեց Եգիկը ու քաջեց կնտկնտոցն այնպես ամուր, վոր լարերը ճռռացին...

Այդ անձոռնի ձայնը դուր չեկավ նրան... Յե՛րբ են հայտնի ջութակահարներն այդպես նվագում: Նվագի փոխարեն խոխոց եր լսվում:

Նա փորձեց նորից ու նորից, բայց նրա մատները տակ չեղգեցին թռչունները:

Վո՛չ կկու՛ն — կո՛ւ - կո՛ւ - կո՛ւ - կո՛ւ:

Վո՛չ սոխակը — ճյո՛ւ - ճյո՛ւ - ճյո՛ւ:

Վո՛չ սարյակը — ճը՛լ - ճը՛լ - ճը՛լ:

Վո՛չ ճնճղուկը — ծի՛վ - ծի՛վ - ծի՛վ:

Չայն չհանեց արտուտիկը, նախշուն տոտիկը:

Կաքավիկը, կլթ - մլթիկը:

Կաչաղակը կչկչանը:

Եգիկը զայրույթից սեղմեց բռունցքը:

Հը՛... Տվել են կես ջութակ և ուզում են, վոր յերգեն ծտերը, ինչպես են մեծ քեռու մատները տակ: Չեն յերգի, իհարկե չեն յերգի... Լսողն ել պիտի կարծի, թե նվագողն ե անշնորհք...

Գլուխը թաթերին դրած մումուում եր փիսիկը:

Գլուխը թաթերին դրած վնգստում եր շնիկը:

Լուռ եյին ծառի վրայի ազնավիկն ու ծիտիկը:

Եգիկը հանդիսականների դժգոհ կերպարանքը տեսնելով, ասաց.

— Եսոր ծտերի հանգստյան որն ե... Դրա հա-

մար ել չեն ուզում յերգել: Սկսում ենք յերկրորդ մասից, կայծակից, — հայտարարեց նա և զայրույթից վորոշեց. այնպես կանեմ, վոր գոռգոռան ամպերը, կայծակը խփի.

Յե՛վ սոխակին:

Յե՛վ սարյակին:

Արտուտիկին, կաքավիկին.

Յե՛վ... յե՛վ... յե՛վ... յե՛վ...

Յե՛վ բոլորին...

— Հետո յել պիտի ասեն, վոր յես չեմ կարողանում նվագել, — լաց յեղավ նա, — ինչո՛ւ պիտի ասեն, յերբ յես... Յերբ յես, են քեռու պես...

Տխուր նայում եր փիսիկը:

Տխուր նայում եր շնիկը:

Կծկվել եր ծառի վրայի ազնավիկը:

Եգիկը նայեց նրանց:

— Մի՛թե նրա համար ե հրավիրել հանդիսականներին, վոր ցույց տա, ինչպես ե լալիս ինքը... Ինքը, հայտնի ջութակահարը, — մտածեց Եգիկը:

Վո՛չ, նա լաց չի լինում, արցունքն ինքն իրեն ե գլորվում, անշնորհք լարի վրա յե բարկացել... Այժմ այնպես կանի, վոր անպայման յերգեն ծտերը, կայծակն ել թող չխփի նրանց. թող խփի լարերին, կնտկնտոցին...

Յերբ նվագում եր են հայտնի ջութակահարը, վո՛չ վոքի չեր նայում:

Աչքերը փակեց Եգիկը և նորից վերցրեց ջութակը:

Սկզբում լսեց թույլ խոռոց, ասես յերգիչը մաքրում եր կոկորդը, բեմ յելնելու համար, սակայն ինչքան մաքրում եր, ավելի յեր խոպտում:



Շնիկը բարձրացրեց գլուխը, խեթ - խեթ նա-
յեց Եղիկին, բայց փորովհետև սիրում էր նրան,
չուզեց խզել կապերը, այլ զգուշութամբ սեղմեց
կառավի պոչը: Փիսիկը մնգստաց:

Ուրիշ ժամանակ լիներ, փիսիկը շանը ցույց
կտար, թե ինչ է նշանակում պոչ կոխելը, բայց բա-
նի փոր Եղիկի յերաժշտությունը շղայնացրել էր
նրան, դրա համար էլ իսկույն մեջքն ուռացրեց
ու փֆաց:

— Ընկեր, թե նվագել չգիտես, լավ կանես լուես...
Այո, այո, լավ կանես լուես: Թող քնեմ, փոր մեծա-
նամ, մեծանամ, փոր աշխատեմ, խոհանոցում կա-
տաղել են մկները: Չե՞ս լսում. ասում եմ հերիք ե:

Մինչև անգամ մկնիկը, մկնիկը, համարձակ-
վեց ծիծաղել, շնայած մոտիկ էր կատուն...

— Ծի-ծի-ծի... Ես ինչ ե... Ես ինչ ե. ծու-
թանկ... ծութանկ... ծի-ծի-ծի...

Հերթը հասավ ազոավիկին:

— Կը՛ռ-կը՛ռո կը՛ռոռ... Իմ մայրիկը կըռկը-
ռան, շութակ չունի, բայց բեզանից լավ է յերգում,
իմ մայրիկը, իմ մայրիկը կը՛ռ կը՛ռ կըռկը՛ռան...

Բա գորտերը, բա գորտերը ցածի առվում ինչ-
պես, ինչպես հոհոացին.

Ու-ւ... Ու-ւ... Ու-ւ... Եխ, դու Եդ-ու-անդ...
Եդ-ու-անդ... Եդ-ու-անդ... Մենք առավոտից յե-
րեկո կոկոռում ենք, փորձ ենք անում, ելի ասում
են՝ լավ չենք յերգում, իսկ դու Եդ-ու-անդ...
Իսկ դու, Եդ-ու-անդ -- ու-ա-ա-ա-ւ... առանց
սովորելիւ ես ուզում նվագել: Հա-հա-հա-հա...
հա, հա-հա-հա-հա...

Նույնիսկ խոզը չհավանեց Եղիկին:

— Աշխարհն էլ գիտի, փոր իմ ձայնը դուրե-
կան է քո նվագից...

Բողոքի հերթը հասավ շիրային:

— Փր՛թ - փր՛թ - փր՛թ - փր՛թ... Շնիկը հաջում է, փիսիկը մլավում է, ագռավը կրռում է, իսկ Եղիկը... Իսկ Եղիկը ես ի՞նչ անճոռնի ճայներ ե հանում....

Հանգիստ չկարողացավ մնալ և կաթը: Նա յեղ եր ուզում իմանալ, թե ինչու յե փագատում շնիկը, ինչու յեր փֆում փիսիկը, փնթփնթում շիրան... Դրա համար բարձրացավ, բարձրացավ, գլուխը պղնձից դուրս հանեց, ու... թափվեց կրակի վրա...

Սոհանոցում տիրեց ծուխ ու մուխ: Սանձահոտը հասավ սենյակը: Եղիկը հոտոտեց, հոտոտեց ու հանկարծ շութակը դեն գցելով, վազեց խոհանոց:

Ախր տատը պատվիրել էր վերցնել կաթը կրակի վրայից ու խառնել շիրան...

4

Այն որվանից կաթը փիսիկի սիրելին դարձավ: Այն որվանից կաթը շնիկի սիրելին դարձավ: Վորտեղ փիսիկն ամանով կաթ էր տեսնում, կարմիր լեզուն թաթախում էր կաթի մեջ, ու հարցնում.

— Քաղցրիկ քույրիկ, մխտդ է, մխտդ է, թե ինչպես են որը կրակի վրա թափվեցիր ու մեզ Եղիկի համերգից փրկեցիր:

Վորտեղ շնիկն ամանով կաթ էր տեսնում, յերկար լեզուն թաթախում էր կաթի մեջ ու ասում.

— Ազիզ քույրիկ, յես քեզ ի՞նչպես մոռանամ, նամ - նամ - նամ, դու զոհվեցիր, փրկեցիր մեզ, բա յես ի՞նչպես չսիրեմ քեզ...

Մեկ էլ հանկարծ պատուհանից ներս էր ցատկում փիսիկը: Շունն իսկույն պարզում էր դունչը դեպի աղբամանը, իբր թե վոսկոր էր փնտռում, բայց փիսիկին խաբելը ՚եշտ չեր: Նա նայում էր



1010
ԵՐԵՎԱՆ

կաթի դատարկ պղնձին և մի լավ ապտակ իջեցնում
շան դնչին:

— Լակեյ ես, հա՛, հա՛Ֆ - հա՛Ֆ աղա, ելի՛ ես լակեր:

— Ինչի՞ ելի, փիսիկ խաթուն, երեկ դու, ես որ
յես, — բացատրում եր շնիկը:

— Իսկի ել չե, — մոմսում եր փիսիկը, — երեկ
ել դու, ես որ ել դու... Թ՛ն, Թ՛ն, Թ՛ն...

— Սուտասան, սուտասան, սուտասան, — հա-
ջում եր շունը, — ցույց տալով ցից ժանիքները:

Աղմուկի վրա հասնում ե տատիկը:

Յեղելու թյունն իմանալով յերկուսի վրա փրնթ-
փնթում ե հավասար: Մեկին ասում եր. «Փիշո, տիրամեռ, մյուսին՝ — կորիք, անտեր»... Ապա, նա-
յելով ժամացույցին, սկսում ե ճաշ պատրաստել:

Քիչ հետո մանկապարտեզից գալու յեր Եզիկը, Եզիկը, սիրուն բալիկը: Նա պիտի ճաշեր, հանդըս-
տանար վոր հետո ել գնար շու՛թակի դասի:

Արդեն մի ամիս եր, վոր սովորում եր նա,
բայց նվագում եր միայն դո, ըե, դո, ըե...

Նա որական պարապում եր յերկու ժամ ե
մրցման եր հրավիրել բոլոր փոքրիկ շու՛թակա-
հարներին:



ՀԵՐԱՍԻ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀՄԽ-ՍՍՐ
Մ. Ա. ՄԱՍԿԱՆ

Խմբագիր՝ Հ. Հայրապետյան
Տեխ. խմբագիր՝ Ս. Ալբուցյան
Մտարկիչ՝ Ս. Փարսադանյան

Գլավիխի լիազոր Կ—4594, Հրատ. 4092
Պասվեր 745, Տիրամ 4000
Պետրասի սպարան, Յերեվան, Լենինի 65

«Ազգային գրադարան»
NL0396276

ԳԻՆԸ 50 ԿՈՊ.

325

8651

Լ. ԿԱՐԳՅՈՒ
Первый концерт Эдда

Գիւ Բրմ. ՏՏՐ Երեւան